ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՖԵԴԵՐԻԿՈ ՄԱՅՈՐԻՆ ԵՎ ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐԻՆ՝ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեկտեմբերի 7-ին Նյու Յորքից նամակ է հղել ԳՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ֆեդերիկո Մայորին, որտեղ Վեհափառ Հայրապետն իր ընդվզումն է արտահայտում Նախիջևանում ադրբեջանական իշխանությունների կողմից Հին Ջուղայի (այժմ՝ Ջուլֆա) հայկական գերեզմանատան վերացման կապակցությամբ:

Վեհափառ Հայրապետը խնդրում է պրն. Մայորին անել հնարավոր կարելին՝ պատմական և քրիստոնեական մեծ արժեք ներկայացնող հայկական հուշարձանը ոչնչացումից փրկելու համար, և հայտնում իր շնորհակալությունը ԳՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հայկական երկու այլ հուշարձաններ՝ Կիպրոսում Սբ. Մակար հայկական պատմական վանք-եկեղեցին թուրքական և Բաքվում հայկական եկեղեցական համալիրը ադրբեջանական իշխանությունների ոտնձգություններից պաշտպանելու համար:

«Թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքահայության անունից դիմում եմ Ձեզ՝ խնդրելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ վերջ տալու այս վանդալիզմին, որը մարդկային արժեքների աղաղակող ոտնահարում է և սրբապղծություն սրբազան հուշարձանների, որ եղել են ուխտի և աղոթքի վայրեր:

Մենք իրոք խորապես վրդովված ենք, որ նման ոտնահարումները կատարվում են բացահայտորեն, իսկ աշխարհը մնում է անտարբեր»,- ասվում է Վեհափառ Հայրապետի նամակում:

Նույն խնդրի առնչությամբ Վեհափառ Հայրապետը նամակ է հղել նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար Կոնրադ Ռայզերին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ